

Այն ատեն երկար խօսակցութիւն տեղի ունեցաւ, որ զլիսաւորարար սա էր.— Թէ Հոլանտայի հետ առեւտուր ընելու միակ կերպը անկէ տանիլն է կապար, սնդիկ, լաթ, կերպաս, բրդեղէն, նաեւ ամէն տեսակ Հոլանտական ապրանքներ եւ արտադրութիւններ, որոնք շատ վաճառելի պիտի ըլլան Դէրբէնդի, Շամախի եւ Արաքսի մէջ ու կարելի պիտի ըլլայ լաւ շահ ստանալ, թէ հում մետաքսը կարելի է Հոլանտա տանիլ, թէ բոլոր ապրանքները, ինչ որ ալ ըլլան, կարելի է աւելի դիւրութեամբ կասպեան ծովով փոխադրել, Վուկանի վեր, Արխանկէլ տանելով, եւ անկէ ալ Հոլանտա, որ շատ աւելի նուազ յողեցողիչ ճամբորդութիւն է քան ցամաքի ճանապարհով Զմիւռնիա տանիլը, ուր ճամբուն վրայ այնքան վտանգներ եւ մաքսեր կան, իսկ անկէ վերջ Զմիւռնիայէն Միջերկրականի մէջ, ինչպէս նաեւ Սպանիական Մոլուքն մէջ, Ափրիկեան ծովահէններու ենթարկուելու վտանգը կայ, բացի Թուրքերէն պարտադրուած անհեթեթ բռնատուրքերէն. թէ հաւանարար Մոսկովի ցարը այդքան բարձր տուրք չի դնէր այսքան կարեւոր անցուղարձ մը իր սահմաններուն մէջէն քաշելու համար, եւայն. թէ Գիլան, Շիրվան եւ Կասպեան Մոլուքն ուրիշ մերձակայ սահմանակից գաւառներ կրնան հայթայթել աւելի քան 50,000 ծրար մետաքս ամէն տարի, ինչպէս նաեւ Պուխարա ալ թանկագին մուշտակներ, իսկ արեւելք լաւ առատ ընտիր կաշի, սաֆրան, խաւրժիլ եւ ուրիշ թանկարժէք դեղեր»։1)

Այս վկայութիւնը ցոյց կուտայ, որ հայ վաճառականները Հոլանտայի հետ կը յարաբերէին Կասպից ծով—Վուկա գետ —Արխանկէլ ուղեգծով, ուրկէ ապրանքը կ'արտածուէր Հոլանտա: Ռուսաց կայսրը արդէն հարկ եղած բոլոր դիւրութիւնները տուած էր մետաքսի հայ վաճառականներուն, որոնց լաւ ծանօթ էին Քրքական այգանիլի կայսրութեան մէջէն Զմիւռնիա ապրանք տանելու դժուարութիւնները, բարձր մաքսերը, ճամբու տուրքերը, աւազակները, աւազակարարոյ պաշտօնեաները:

Դարձեալ Զմիւռնիայէն անդին Միջերկրական եւ Սպանիական ծովերուն զլիսաւոր վտանգը, Ափրիկեան ծովահէնները, ինչպէս նաեւ քրքրատոնեայ խաչակիր կամ անխաչ արիւնկղակ ծովահէն «ասպետները» պատճառ եղած էին, որ հայ վաճառականներ լքեն այս ճամբան:

Այսուհանդերձ թէ՛ Պոլսոյ, ինչպէս որ ծորձ Սանտիս Անդլիացին 1610-ին կը վկայէ, եւ թէ՛ Զմիւռնիոյ մէջ հայերը տէր էին առեւտրական հրապարակին: Իրենց շնորհիւ ներսերէն ապրանքը այս երկու մեծ առեւտրական կեդրոն-նաւահանգիստները կը բերուէին, ուր Եւրոպացի վաճառականները կուզային իրենց ապրանքները գնելու:

Թավէրնիէ կը վկայէ, որ Զմիւռնիոյ առեւտուրը շատ մեծ էր, եւ զլիսաւոր ապրանքը որ Փոանիները անկէ կը փոխադրէին, հում մետաքս էր, որ Հայերը Պարսկաստանէն կը բերէին:2)

Գալով Հոլանտացիին վկայութեան՝ կը տեսնենք, որ Գիլանի եւ Շիրվանի կողմերէն3) 50,000 հակ մետաքս կարելի էր տարեկան արտահանել: Հաւանարար, ասկէ դատ, չըջակայ

2) Travels... 1684, p. 34:
 3) Բազմաթիւ են այս կողմերու մետաքսի արտադրութեան մասին վկայութիւնները: Թուրք էվլիա էֆէնտին կը վկայէ, որ «Կէնճէի (Գանձակ) մետաքսը նշանաւոր է: Կէնճէի շուրջ դաշտին մէջ կան անհաւատի դիւղերու եօթը չըջաններ, ուր բամպակ, մետաքս եւ բրինձ կը մշակուի... Կէնճէի ձիու պայտերը իր մետաքսէն նուազ նշանաւոր չեն»: (The Travels of... London, 1850, Vol. 3) Անդլիացի մըն ալ կը վկայէ. «Մետաքս եւ թաւիչ դործելու եւ փոխադրելու մէջ առաջին կարգին վրայ կը գտնուի Գիլան, իսկ երկրորդ՝ Շիրվան»: (John Freyer's Travels.— Vol. 3, p. 15) Իսկ Թավէրնիէ կը գրէ. «Շատ մը հին հայ ընտանիքներ կան Երեւանի մէջ, որ իրենց բրնիկ երկիրն է... Այս քաղաքը, շատ հեռու չըլլալով գաւառէն ուսկից մետաքս կուզայ, գնորդներու եւ ծախողներու յաճախման վայրն է»: (Travels... London, 1684, p. 14)

1) The Voyages... p. 213: